

ՀԱՄԱՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՎԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆԱՎԱՐՏ ԵՎ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԸ

Սովետահայ ականավոր դրող Դերենիկ Դեմիրճյանի արխիվում կան բավական թվով արձակ, չափածո և զրամատիկական երկեր, որոնք անավարտ կամ ցարդ անտիպ են մնացել:

1930-ական թթ. Դեմիրճյանն սկսել է աշխատել «Նոր մտնումներում» («Փաղաք») վեպի վրա. աշխատանքը բեղմնորտմներով շարունակվել է մինչև 50-ական թվականները, այնուամենայնիվ այն չի ավարտվել: Նախնական հղացմամբ «Նոր մտնումներում» լայն բեղբրկում էր ունենալու: Այն պետք է դառնար Երևանի քաղաքաշինության ղեկավարվածության պատմություն, պատկերներ մարդկանց, որոնք համարյա «անապատում կանգնեցրին մեր հոյակապ քաղաքը», «լուսիս բերին այդ սիրազորությունը»: Վեպի գրառված մասում Դ. Դեմիրճյանը անգրագարձել է այս խնդիրներին, պատկերել «Նոր մարդկանց գիտակցության բարձրացումը»:

1924 թ. «Վերելք»-ում (№ 2—5) տպագրվեց Դ. Դեմիրճյանի «Համառոտ անմահներ կամ հավերժական մահկանացուներ» երգիծական վեպի սկիզբը: Այն ունի «Վեպ մոտավոր անցյալից» ենթավերնագիրը: Գրողի ձեռագրերում չենք գտնում վեպի շարունակությունը, քանի որ հեղինակը հետո փոխել է այն գրելու իր միտքը: Նախնական պլանից երևում է, որ ավարտվելու դեպքում այն կներկայացներ զաշնակների տիրապետության պատկերը Հայաստանում, ցույց կտար նրանց հակամոլորդական գործելակերպը: Վեպի առաջին պատկերն ընդհատվում է մի քանի բախտախնդիրների, այդ թվում խանութպան Սաշայի, վանեցի վաճառականի, ոմն Ավագ Սաղինյանի (նույն ինքը՝ Գերագույնը) և ուրիշների՝ Քիֆիսից Երևան մեկնելով, Փաղաքական այդ բախտախնդիրները շտապում են մտնել Հայաստանում ստեղծված զաշնակների զառավարության մեջ, գրավել բարձր պաշտոններ: Հաջորդ գլուխներում պատկերվելու էր նրանց գործունեությունը Երևանում:

«Մեքենայ Մաշտոց» պատմավեպը, ինչպես երևում է նրա ձեռագրերից, շատ հոգսեր ու մտահոգություններ է պատճառել հեղինակին: Կազմված են ընդարձակ պլանները, «մթերված» է հսկայական նյութ: Գրողը նախատեսել էր լայն կտավի վրա ներկայացնել Մեքենայ Մաշտոցի քաղաքական ու մշակութային գործունեությունը. նրա պայքարը ինքնուրույն գրականության համար, գեահատվելու էր հայ գրերի գյուտի պատմական նշանակությունը մեր ժողովրդի բախտի ու ճակատագրի մեջ: Լինելով մեծ հայրենասեր ու մտածող, Մեքենայ Մաշտոցը իր առջև խնդիր էր դրել, — գրում է Դ. Դեմիրճյանը, — «հավաքել անցյալի քուր արժեքները, ներկա ուժերը, և սկսել հուզեր վերածնություն, հոգևոր հարձակում եվանգելների դեմ, լարել ուժերը, քարձրանալ հույներից, քարձրանալ պարսիկներից, քարձրանալ ինքն իրենից...»: Մաշտոցը, շարունակում է անվանի գրողը, խորապես հասկացավ, որ միայն «ազգային ինքնաճանաչություն» կարող է փրկել հայերին ոչնչացումից, ուստի և քաղաքական ինստիտուտների գիմադրության մեջ անհրաժեշտ գտավ մտցնել ներքին ուժը — կուլտուրան, լուսավորությունը, մտավոր դարձերը²:

Անավարտ ու անտիպ պատմվածքների թիման հիմնականում նախատվետական շրջանի մարդու անհրապույր կյանքն է: «Աստծու տանը» (մի տարբերակում՝ «Նոր արած») պատմվածքի³ նյութը վերցված է համաշխարհային պատերազմից, սակայն հեղինակը չի կրկնում այդ թեմայով իր գործերը («Ժպիտք», «Ավելորդը», «Հովհան Մեծատունը» և այլն): Նա զարգացնում է այն միտքը, որ հայ ժողովուրդը, իմպերիալիստական պատերազմի ծանր օրերին, կանգնած լինելով ֆիզիկական ոչնչացման ահավոր վտանգի առջև, չի կորցնում իր կենսունակու-

1 Տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գյուղականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դեմիրճյանի ֆոնդ, № 1208:

2 Նույն տեղում, № 487:

3 Տպագրվել է միայն 1964 թ. (տե՛ս «Սովետական գրականություն», № 10):

թյունը, պահպանում է հավատար կյանքի նկատմամբ: Բազմաթիվ հայ գաղթականներ, այդ թվում՝ կանայք, երեխաներ ու ծերեր, ապաստան են գտել մի մարագի մեջ: Նրանց սպառնում է թշնամին, տանջում սովը: Գաղթականների վիճակը անհանգստացնում է նաև նրանց օգնություն երկտասարդներ՝ աղքիկ ու տղա, հայր սուրբին թախանձագին խնդրում են իրենց պսակել: Լավ ժամանակ են գտել, մարգիկ իրենց գլուխը դնելու տեղ չունեն, եկեղեցի չկա, սիրտ չկա, իսկ սրանք՝ պսակի՝: Մոլորակի վրա պսակիր, հայր սուրբ, — առաջարկում է տղան: Հոգի է, որ տուն չունեն, նրանք կթնեն արտում:

— Արտի մեջ պիտի քնեք, ձեր տունը արտն է, — դարմանում է հայր սուրբը և... նահանջում երիտասարդ սրտերի զորեղ զգացման առաջ: Նա զվերցրեց մի բուռ հող, բոնեց նրանց գլխին ու դողողուն ձայնով մրմնջաց... ցանեց հողը նրանց գլխին: Պատմվածքի տարբերակներում կան տեքստային տարբերություններ: Օրինակ՝ տարբերակներից մեկը սկսվում է այսպես. «Ինչպես տափաստանը վեր կենա տեղից, ու զարկված փախչի... փախչում է մի ամբողջ ժողովուրդ»: Այս տարբերակում աղքիկը կոչվում է Գայանե, հայր սուրբը՝ Շիմպանզե: Ահա և պատմվածքի վերջը. «Ջուլգի գլուխները իրար մոտեցնելով՝ խաշակեցին երեսը և կերկեր ձայնով աղոթեց: Կարճ էր աղոթքը»⁴:

Ուշադրություն է դրավում Միայն մեկը պատմվածքի սևագիր տեքստը: Թեև գրողի ձևաբով վերնագրից հետո գրված է «վարիանտ», և վերջում՝ «շարունակելի», սակայն ձևագրերի մեջ չի գտնված մի այլ տարբերակ կամ եղած տեքստի շարունակությունը: Սա փաստորեն պատմվածքի էքսպոզիցիոն մասն է՝ գլուղացի Մանուկի, կնոջ և աղքկա աշխատանքի մի պահի նկարագրությունը, պորտրետային մի քանի ընդգծված բնութագրերով. ահա գլուղացու 12-ամյա աղքկա պորտրեն. «Եղեգնի պես լղար էր ու ճկուն: Կապույտ դեղնա փրփի ու կրծքի վրա սեղմվելով՝ ցույց էր տալիս նրա ուռնու իրանը: Խոշոր, խելոք աչքերը ցորենին հառած՝ նա ջանասիրաբար հավաքում էր մանրիկ խիճերը և նետում գետափի կողմը: Մատաղ էր նա, բայց տեղովը հագն էր ու աշխատանք: Մոր կտորը, որ տնարարի հայացքով իր գործին էր ու չէր ժպտում: Մարմինը դեռ խակ էր, բայց որ հասունանար, պիտի կանգներ նայողի դեմ, իբրև մոմեղեն մի սիրուն կույս: Մրջյունի պես մտազրաղ անձնվեր հակվում էր նա իր գործի վրա: Մարգու ափսոսը կգար՝ ուտելու նրա տաժանելի ջանքի պտուղը՝ մաքրած ցորենը»⁵: Գլուղական աշխատանքի պահը ընդհատվում է ճանապարհի վրա գաղթականների մի խմբի երևալով: Սրանք փախչում էին հետապնդող թշնամուց, որը ժամ առ ժամ մոտենում էր այդ գլուղին: Այստեղ ընդհատվում է պատմվածքը, թեև ընթերցողը արդեն կոհանում է հողմի բերան բնկած ընտանիքի ճակատագիրը:

«Վարժապետը անավարտ պատմվածքի⁶ նյութը ուսուցչի խոհերը, մտածումներն են նոր սերնդի, աշակերտների ու պաշտոնակիցների վերաբերյալ: Նախասովետական ուսուցչի կերպարին գրողն անդրադարձել է նաև «Գետակի երգը» պատմվածքի մեջ, որ սակայն, ցավոք, չի ամբողջացված: Պատմվածքի հերոսը, որ մի թախծոտ ուսուցիչ է Օհանյան ազգանունով, սիրում է մի աղքկա՝ Աշխենին, բայց պարզվում է, որ նա էլ ուրիշի է սիրում և խաղված է նրանից: Օհանյանի հոգեկան աշխարհը փշրվում է. կյանքը այլևս ոչ մի հրապույր չի ունենում նրա համար: Այստեղ հեղինակը նպատակ է ունեցել շոշափել սիրո ու երջանկության հարցը: Պատմվածքի հերոսուհին գտնում է, որ մարդու երջանկությունը փոխադարձ ու ներդաշնակ սիրո մեջ է, և եվ հակառակ նրանց ճիշտ պատկերացումներին, այդ մարդիկ կյանքում չեն գտնում սիրո երջանկություն և խորտակվում են:

«Տարբերային» վիպակի ձևագիրը ծածկված է բազմաթիվ ուղղումներով և բռնում է 100-ից ավելի մեծադիր էջ: Հավանորեն այս երկը գրվել է այն օրերին, երբ գրողը ուսանում էր Ժնևում: Սեսանդի նեղ օրերից մեկն է պատկերվում այստեղ Շվեյցարիայի սոցիալական կյանքի ընդհանուր ֆոնի վրա: Պատմվածքի հերոսը՝ մի աղքատ հայ ուսանող, ամենուր տեսնում է անարդարություն, մարդը զգրկված է մի կտոր հաց ձեռք բերելու հնարավորությունից: Եվ սա այն-

4 ԳԱԹ, Դեմիրճյանի ֆոնդ, № 244:

5 Նույն տեղում, № 246:

6 Այս վերնագրով Դեմիրճյանը գրել է մի ուրիշ պատմվածք էլ, որը տպվել է «Նոր ակոս»-ում (1924, № 5): Դա երգիծական բնույթ ունի. ծաղրված է հին ուսուցչի սահմանափակությունը:

քան թմրկահարված Շվեյցարիան է, ուր հարստության, գեխության կողքին կարելի է տեսնել աղքատություն և թշվառություն: Երիտասարդ մարդը քաղցած ու մտամուռ շրջում է քաղաքում, դնում է երկաթուղային կայարան, ուր մարդիկ ճանապարհում են գնացքները, և նա խորհում է դառնագին ու զայրալից: «Նոր գնացք է գնում դեպի ջհանդամը և կարեւոր է, որ անպատճառ ես այստեղ լինեմ և ճամփու դնեմ: Ախր ինչպե՞ս կարելի է, որ գնացքները առանց սոված մարդու թույլտվության շարժվեն»⁷, Եվ բովանդակ աշխարհում նա զգում է իրեն մեկուսի, լքված ու անօգնական:

«Ավելորդ»-ի մոտիվներով է դրված «Հարկ եղավ» սևագիր պատմվածքը, որի նյութն է Հայրենական պատերազմի մի դրամատիկ գեպը: Մարդիկ անակնկալ էվակուացվելով՝ ստիպված էին թշնամու թիկունքում թողնել ծեր ու հիվանդ մի կնոջ, որը ոտքով նրանց հետևել չէր կարող:

Ձեռագիր պատմվածքների մի մասի թեման սովետական մարդկանց կյանքն ու առօրյան է: «Ծանրագույն թուղթը» պատմվածքը նվիրված է գրողի և ընթերցողի կապի հարցին: Գրողը մեր երկրում սիրված է ընթերցողից և մղումներ է ստանում նրանից: Իր մոտ թղթի եկած դրույին ծեր պահեստապետը ընդունում է բարյացակամ, մտահոգվում, որ թուղթը բարձրորակ լինի և մի քիչ էլ ծանր: «Վերցրեք, ոչինչ, — ասում է նա, — կորած տեղ չէ, — ու առատ զղացմունքով նա նայեց աչքերիս մեջ: Ես ականածեցի այդ հայացքից: Թուղթը, երեք կիլո թուղթը, միլիոնավոր փթերով ծանրացավ՝ գրկիս մեջ: Եվ ինչի՞ց գիտեմ, որ կորած տեղ չէ... կաշխատեմ, հայրի՛կ, որ «կորած տեղ չլինի»⁸, — խորհրդածում է գրողը պատմվածքի վերջում:

Հետաքրքրական են «Աշխարհի համար», «Զրույց մի գյուղացու հետ», «Երկաթե եզ», «Արաբատյան դաշտում», «Խավարի անդունդը» սևագիր պատմվածքներն ու ականակները, «Արշակը» փոքրուց», «Գուրիկի աղավինները», «Կարինե», «Պիոնիրների ծառերը» և այլ մանկական պատմվածքները:

Առանձնապես ուշադրության արժանի են Դեմիտրճյանի անավարտ և սևագիր պիեսների՝ խարակտերային ու դրույթյան դրամաների, երգիծական և հումորիստական կատակերգությունների, վոդեվիլների, էտյուդների, կինոսցենարների, լիրիկոնների և այլ գործերի ձեռագրերը: Նյութը՝ երբեմն անցյալն է, բայց ավելի հաճախ՝ քաղաքացիական կռիվները: Դեմիտրճյանի դրամատուրգիայի նշանակալից երկերի թվին է պատկանում «Հովնան մեծատուն» դրաման, որը, սակայն, անտիպ լինելով՝ քչերին է հայտնի: Քննադատությունը գաղափարական կապ է տեսել 1916 թ. գրված «Ավելորդ»-ը պատմվածքի և այս պիեսի միջև⁹:

Չնայած ավարտված, սակայն մինչև հիմա ձեռագիր է «Ազգային խայտառակություն» կատակերգությունը (1917 թ.), որը բեմադրվել է 1919 թ. Թիֆլիսում: Այստեղ ցույց են տրված մի քանի «ազգային գործիչներ» (Մետուկյան, Զանդուղազյան, Զարոխյան, տիկին Մարո և այլն)՝ բռնաբարության կա բուրժուական ազգայնականության նկատմամբ: Այդ մարդիկ կեղծ ճառեր են ասում ազգի ու հայրենիքի մասին, բայց իրականում հետապնդում են իրենց մերկ շահերը, շորթում հայ գաղթականների համար հավաքված «մարդասիրական ընկերության» գումարները, տաքուկ պաշտոնների ձգտում:

Գրողի ձեռագրերի մեջ է Շիրվանզադեի «Համառոտ նախագահության» անավարտ տեքստը, որի 3-րդ գործողությունը գրել և ամբողջ պիեսը խմբագրել է Դ. Դեմիտրճյանը: Նրան հաջողվեց է տրամաբանորեն զարգացնել սյուժեն, գտնել համապատասխան վերջավորություն, դիմականդերծ անել քարեսիրական ընկերության շուրջ խմբված կեղծ ու ընչաքաղց մարդկանց: Դեմիտրճյանը սկսել է նաև «Համառոտ անմահներ և հավերժական մահկանացուներ» վերնագրով մի պիես, սակայն գրել է միայն մեկ գործողություն: Հեղինակի կողմից վերջնականապես չեն մշակվել «Օմարը և Մարտիրոսը», «Հաղթանակի օրը», «Դեպի մեծ կյանք» և այլ պիեսները, մի քանի վոդեվիլներ, հումորական տեսարաններ («Բամբակի համար», «Կատակ», «Կոպերատիվ» խանութ», «Մի գողի արկածներ» և այլն):

Հոկտեմբերյան հեղափոխության թեմայով է գրված «Արհավիրքներով» անավարտ պիեսը: Երա միայն մի հատվածն է ժամանակին տպագրվել մամուլում¹⁰: Պիեսի հիմքում ընկած են

7 ԳԱԹ, Դեմիտրճյանի ֆոնդ, № 450:

8 Նույն տեղում, № 326:

9 Տե՛ս Տ. Հ ա խ ու մ յ ա ն, Դեմիտրճյանի դրամատուրգիան, էջ 109:

10 Տե՛ս «Նոր ուղի», 1931, գիրք Բ:

1917 թ. մարտից-նոյեմբեր ընկնող ժամանակաշրջանի պատմական դեպքերը, փետրվարյան հեղաշրջումը, ժամանակավոր կառավարության ստեղծումը և ապա՝ սոցիալիստական հեղափոխության հաղթանակը երկրում: Հանդես են գալիս սոցիալական ամենատարբեր ուժերի ներկայացուցիչներ՝ միապետականներ, կալվածատերեր, կապիտալիստներ, շինովնիկներ, քաղաքական գործիչներ, զինվորականներ, դիվանագետներ, հեղափոխական բանվորներ և գյուղացիներ, յուրաքանչյուրը իր նպատակներով ու շահերով: Պիեսում երևում է ժամանակաշրջանի քաղաքական փոթորկուն կյանքի բարդ պատկերը, զգացվում է հերոսական օրերի շունչը: Մոտալուտ հեղափոխությունից սարսափած հարձակումը գլուխ են բարձրացնում հակահեղափոխական բոլոր ուժերը: Ժամանակավոր կառավարությունը ժողովրդին կեղծ խոստումներ տալով՝ փորձում է նրան հեռու պահել քաղաքական պայքարից, կաղեւտ Գրանովսկին հավատացնում է, որ շուտով կլուծվի հողի հարցը, հաշտություն կկնքվի Գերմանիայի հետ, բայց մյուս կողմից պատժիչ ռեպրեսիաներ է ուղարկում գյուղ՝ «հողային բուստերը» ճնշելու համար: «Արհավիրքներով» պիեսի հեղափոխությունները վկայում են, որ հեղինակը շատ որոնումներ է կատարել, հաճախ փոխել է տեսարանները, փոփոխություններ մտցրել արդեն գրված տեքստերի մեջ: Այդ որոնումները, սակայն, չհանգեցրին պիեսի վերջնական տեքստի ստեղծմանը:

Քիչ չեն նաև այն պիեսները, որոնց նյութը սովետական ընտանիքի ու բարոյականության հարցերն են: «Միլիոն, միլիոն պապաներ» դրամայի սյուժեն ընթերցողներին հայտնի է գրողի «Անհայրություն» և «Ուրիշի երեխա» պատմվածքներից: Պատերազմը մեծ փորձություններ է լքերել Վախթանգին. նրա կինը՝ Անահիտը, ստանալով ամուսնու սպանության լուրը, կապվում է ուրիշի հետ և երեխա ունենում: Ամուսնու սպանության լուրը, սակայն, հերքվում է, շուտով զալիս է ինքը՝ Վախթանգը, հոգեկան ծանր ապրումներից հետո նա ներում է կեռչը և նույնիսկ պատրաստ է պահել «ուրիշի երեխային»։ սակայն Անահիտը դեռևս իրեն պատրաստ չի համարում այդ համատեղ կյանքի համար:

«Սերը պարտականությունների մեջ» դրամայի հիմքում ընկած է անսեր ամուսնության հոգեկան տառապանքը, շոշափվում են նաև մեր օրերում կեռչ կուլման և հասարակական պարտականության հարցերը: Գնդապետ Ռաֆայելի ընտանեկան դրաման խարսխված է այս հիմնական կոնֆլիկտի վրա: Ռաֆայելը իր ողբերգության մասին ասում է. «Սիրում ես, չեն սիրում թեղ, և տանջվում ես»: Ահա և նրա կեռչը՝ Աստղիկի դրաման. «Զեռ սիրում, սիրում են թեղ և տանջում»¹¹: Դրաման սակայն, շունչի սուր կոնֆլիկտներ, Դեմիտրևյանի բառերով ասած՝ դրամայի «ներվը» հանդիսացող դրամատիզմը չի խորացվում, պակասում է հերոսների գործողությունների հոգեբանական պատճառաբանվածությունը: Միմյանցից բաժանված և գծոված ամուսինները դրամայի վերջին գործողության մեջ հանդիպում են նորից ռազմաճակատում, սակայն հոգեկան կապ չի ստեղծվում նրանց միջև. Աստղիկը շուտով սպանվում է, իսկ Ռաֆայելը, ծանր վիրավոր՝ էվակուացվում: Այսպիսի հանգուցալուծումը, անշուշտ, հնարավոր լինելով, ինչ-որ հետական է դառնում և պակաս համոզիչ:

Դ. Դեմիտրևյանի արխիվում պահվում են նաև «Մորաթույր Մարուշի ճամփորդությունը» կինոնոմեդիայի, «Վարդան Մամիկոնյան», «Փաշ Նազար» և «Սասունցի Դավիթ» (չափածո) լիրերետների ձեռագրերը:

Գրողի ձեռագրերում կան ոչ միայն երկերի տեքստեր, այլև պլան-ուրվագծեր, կոնսպեկտներ, ինչպես նաև հատվածներ. երկախոսություններ, մտքեր, որ նա գրի է առել այս կամ այն երկում՝ օգտագործելու նպատակով: Հավաքվել են 1930-ական թթ. նոր Բայազետի շրջանում տեղի ունեցած քաղաքական դեպքերի վերաբերյալ շատ նյութեր, կազմվել է բավական ընդարձակ պլան, տրված են հերոսների (Ռուստամ, Հյուսիսաթ, Իսկանդար, Բահրամ և այլն) բնութագրերը, որոշվել են սյուժետային գծերն ու գրությունները՝ Հյուսիսաթի սպանությունը Ռուստամի և նրա կամակատարների ձեռքով և այլն: «Կենցաղային վեպի նյութերից» — այսպես է կոչվում այն թղթապանակը, որի մեջ գրողը հավաքել է մի նոր վեպի նյութերը, պլանները, առանձին հատվածներ, մտքեր, հերոսների բնութագրեր: Գրողի ֆունդում կան գրառված ապագա երկի շատ պլան-թեմաներ, երբեմն մի քանի տողով սյուժետային շարադրանքներ: Նոր պատմվածքի կամ նովելի նյութ պետք է ծառայել գրառված հետևյալ սյուժեները¹². «Նրա-գում կոչում է մեկի հետ և սաստիկ զայրույթից արթնացել է... ծիծաղում է իր վրա և նեղանում — ի՞նչ ես ծիծաղում վրաս»։ «Այնպիսի աֆերիստն է, որ մոտից երկու ուղտ անցկենա, մեկը գրպանը կկոխի»։ «Մի աղավնի է նստած վիթխարի հրանոթի փողի վրա: Նստած է անվր-

¹¹ ԳԱԹ, Դեմիտրևյանի ֆունդ, № 669, էջ 37:

¹² Քաղվածքները բերվում են գրողի ֆունդիս: № 817—882:

դով, միամիտ ու նայում է չգիտես թե ուր: Զգիտի թե ինչի վրա է դրել իր փափուկ ոտիկները: Զգիտե ոչ այն մահվան գործիքը, որի վրա հանգիստ է առնում նա մի պահ, ինչպես և շատ մեքենաներ ու թակարդներ, որ լարված են աշխարհիս երեսին: «Սիրո առարկան հիվանդանում է և մեռնում, կամ բանտարկվում է և սիրահարը ուրախանում է, որ ազատվեց սիրուց, ավելի շուտ խանդից, որովհետև եթե աղջիկը ուրիշին սիրեր, կամ ամուսնանար ուրիշի հետ, ինքը պետք է տանջվեր»: «Հայրը իր կնոջը թողել և ամուսնացել է ուրիշի հետ: Կինը մեռել է: Հայրը պահանջում է, որ իր նոր կնոջը երեխաները սիրեն, հարգեն: Արմիզան է թույլ բեր չեն հաշտվել հոր պահանջների հետ: Հայրը բոլորովին հեռացել է իր աղջիկներից: Իմաստն այս է՝ մոռացե՛ք, հաշտվեցե՛ք, որ ձեր մորը և ձեզ թողել են, հարգեցե՛ք իմ նոր կնոջը, մոռացե՛ք ձեր մեռած մորը: Որքա՛ն է գոհիլմա: «Այնքան կարգի գցեց իր գործերը, որ ինքը անպետք դառավ հիմնարկի համար և դուրս արին: «Ջուրը մտել է սենյակը, իսկ ինքը գնո գրում է. ոտքերը թրջվել են, մրսում է, երբ շատ նեղվում է, նոր է գլխի բեկնում: «Տգեղ դեմք ունի, ագնում է գեղեցկացնել և պոկում է հունքերը, չպարում է այտերը, շրթունքները, տրոտում և ավելի... տգեղանում: Բայց կովում է տգեղության դեմ, կովում է համառ, անդադար, այգ անողոր տգեղության դեմ և այգ կովում պարտվում է, արդեն պարտված է, իսկ սիրտը լիքն է դեղեցկության իդեալով: «Կոչ կոչեցին, թե թող բոլոր գայլերը, վագրերը, առյուծները և ոչխարները հավասար ապրեն: Ոչխարն իսկույն համաձայնվեց: «Դաշնակցական Հայաստանում մի հետաքրքիր բան կար, դա գիժ Ապոն էր, որ հավաքում էր չուլ ու փալաս և ցուցադրում իր տանը իրեն հնություն: Ուսուցիչ էր և «արխիոլոգ», հետախույզ հաշտեցնում է իրար հետ կովածներին, խոսելով ամեն մեկի հետ նրանց կողմից: «Հեղեղի ժամանակ ներս է մտնում և ասում՝ թե հեղեղ է, չեն հավատում և հանգիստ քնում են, որովհետև ասողը հայտնի է իրեն սուտիկա:»

Դեմիքանյան, ինչպես վկայում են նրա գրառումները, մտադիր է եղել հետևյալ սյուժե-շենրով վեպ կամ պիես գրել. «Օպորտունիստը մարտնչող մարքսիստների խմբակում և ոչ մեկի դեմ չի մարտնչում, թեև միշտ «կրակի» պես է: Փոթորկոտ օպորտունիստը: «Տխրահեմ ասպետը, որ ընկած է ակտիվ լինելու հարկադրանքի մեջ: «Փանոն, ուրիշի հաշվին հերոսություն, ինքը չէ, բայց թող ուրիշները հերոսանան, անեն, ինչ որ ինքն է ուզում: «Ձանձրացած մարգր. օպորտունիստ տխուր ասպետը (Սանչո) և Կրիկուն գինակիրը (Դոն Կիխոտ), որի բոլոր ոգևորությունները նշում է ձանձրությունը (վեպ)». «Ով աշխատում է ազատել կնոջը (պոռնիկ), ինքը չնկնում է նրա հետ: Մեկը հետը չի ընկնում, բայց նրան էլ հայածում են և այլև:»

Ահա և գրողի ընտրած ապագա երկերի թեմաներից մի քանիսը. «Նա աշխարհ եկավ սանդղոթների վրա: «Դուրս բերել պրովոկատորի խարդախությունները, որ թունավորում է մարդ-կանց մտքերը և խանգարում աշխատել: «Վեպի թեմա՝ ինչպես մարդիկ փոխվում են: «Երկու նման քույրեր և նրանց վրա սիրահարվածի արկածները:»

Այս պլան-թեմաներից քչերին է նա հետագայում անդրադարձել: Այսպես՝ նա սեպտեմբեր է մի պատմվածք նախնական հետևյալ պլանի համաձայն՝ «եկարագրել մի քելեխ, որ մեկը չո կարողանում զսպել իր քեֆը: Պատմվածքի վերնագիրն է «Քելեխա՛՛՛, Հերոսը՝ ոմն Բարսեղ, զենում է բարեկամի հուղարկավորությանը և մուսանալով սուգը՝ նստում է հոգեհացի և ազահարար ուտելով իր վրա է գրավում ներկաների ուշադրությունը: Դեմիքանյանի թղթերում գտնվող մի մեծագիր թղթապանակի վրա հեղինակի ձեռքով գրված է «Փաշ Նազար», վեպ, 1947 թ. գեկտեմբերի 16-ը: Մի այլ թղթապանակի մեջ հավաքված են վեպի նյութերը՝ «Փաշ Նազար»-ի հիմքը, փիլիսոփայությունը՝ ընդհանուր խորագրի տակ: Այստեղ գրողի մտքերն են, խոհերը, պլանները: Նախնական հղացմամբ «Փաշ Նազարը» լինելու էր մարդկային երգիծանք՝ ընդդեմ աշխարհի տիրապետողների և ամեն տեսակ բախտախնդիրների: «Փաշ Նազար»-ի իդեան, — գրել է իր պլաններում Դեմիքանյանը, — ոչ թե (միայն) դաշնակցությունն է, մենչեիզմը, ցարիզմը է այլև, այլև մարդը, որը նրբորեն դաժան է, երբ իշխանություն ունի, և սաստիկ մտահոգ է իր անձի ապահովությանը, երբ վտանգների մեջ է (երբ իր անձի վիճակը ուրիշներն են տնօրինում), մարդը անտարբեր, անհոգ ու ցածոգի ուրիշների հանդեպ: Երկրորդ գիծը ֆանտազիան է, ֆանտազիայի խաղերը, որ բանում են նրա ուղեղում և հնչտությունը՝ «չարդում են» մարդկանց, տնօրինում են վիճակներ, կարգավորում աշխարհիս իրերը: «Փաշ Նազար»-ի մեջ մտցնել բազմակողմանիություն՝ պլանի և իդեայի մտքով, ժողովուրդը — պարզաշենցիները արտահայտում են իրենց դարավոր իմաստությունը, գաղտնությունը, հույսը, պայքարի պոտենցիալ մղումները,

Հումորը և այլն: Այսպես՝ ծաղրածու պարզաշենցիները ստիպված են կատակի տալով հասկացնել ժողովրդի վիճակը՝ ճշմարտությունը հայտնել ծաղրածանական խոսքերով: Այդ նույն ձևազիր պլանների մեջ է նաև ապագա վեպի հետևյալ սևագիր առաջին էջը. «Փաշ Նաղարձ վեպ. մասն առաջին. Հայաստանի լեռնային գյուղերից մեկում ապրում էր Նաղար անունով մի մարդ իր կնոջ՝ Ուստիանի հետ: Մաղումով այս մարդն ու կինը, եթե իրենց հարցնեիր, ազնիվ էին, և գյուղի իշխանավորներից: Դա ճիշտ էր. բայց ոչ այնքան: Նրանց հայրերն ու պապերը կիսա-կուլակ, կիսաունևոր էին, միշտ ձգտելով կողոպուտի, կամ այլ միջոցով կարողություն ձեռք բերել: Բայց որովհետև...»¹⁴ (Այստեղ ձեռագիրն ընդհատվում է):

Գրողի ձեռագրերի մեջ գտնում ենք նաև զանազան երկերի համար դրված աֆորիզմներ, մտքեր, տեսարաններ, երկախոսություններ: Բերենք դրանցից մի քանիսը. «Մարդկային միտքը չի բավարարվում ձեռք բերածով. նա ձղտում է «ավելին», միշտ կմնա այդ պահանջը՝ էլ ազնիվ, էլ ավելի էլ ազնիվ և սա միշտ հավիտյան»։ «Լսելը թեորիս է, տեսնելը՝ պրակտիկա»։ «Բնությունը մահը ստեղծել է կյանքը սիրել տալու համար»։ «Ովքեր հավատ չունեն, դժվար են մեռնում: Հեշտ է մահը, երբ քեզանից հետո պետք է ապրի մի մեծ բան»։ «Մանր է սիրուց տանջվելը, բայց և տանջելը մարդուն»։ «Հավատում ենք. ծնվել էնք, հավատում ենք ապրում ենք, բայց չենք հավատում, որ դեպի մահ զենում ենք (մտքեր)»։ «Ակնոցով մարդը, որ զգուշ գնում է, — երկրաշարժ է պատահելու: — Ցիկլոն է սպասվում, կարող են ճանապարհները փակվել: — Ապա ակնոցս որ կտորվի: Օպտիկ մազազին չկա»։ «Ենթադրար կնոջն է տալիս իր ողջ թուլակը. կինը — ես էլ ունեմ 40 ուրիշ: Սուրեն — ուր է: Կինը. — այ (ցույց է տալիս Ս-ի տվածը), սա իմն է, ես քեզանից լավ կապրեմ»։ «Մի ժամանակ շատ անխելք էի: — Հիմա ինչպե՞ս եթե: — Հիմա խելացի եմ: Հիմա ոչինչ» (դիալոգներ):

Ձեռագրերի մեջ գտնում ենք Գորկու նվիրված «Կրակ» դրամատիկական պոեմի (անավարտ) հետևյալ հատվածները. «Սիրում եմ կրակը, վեպվեսում է նա... տեսնում եմ հուսով, մարդը քայլում է դեպի արևը, դեպի տիեզերքը... ամեն վեճ բանի բնությունն է՝ արվել, արձակվել լույս գեղեցկությամբ և ապա՝ հանգչել... Ձի լինի՝ կրակը... երբեք մի կարծիր, կհանգչի աշտեղ, այնտեղ կցայտի մի այլ վառ կրակ, երկրի ընդերքում անվերջ անբավ է պաշարը կրակի... Եվ ով սիրում է կրակը այնպես՝ անմահ է արդեն: Ահա թե ինչու կրակն եմ սիրում... Սիրիր գեղեցիկը, սիրիր վեճը, միշտ կլինես դու վեճ, անմահի սերը անմահ է դարձնում, ահա թե ինչով հավերժանում ենք մենք... վախ չունեմ մահից. ի՞նչ է կյանքը, կանցնի նա մի օր: չի անցնի միայն ժողովուրդը հավետ»¹⁵։

Վերը քննության առնվեց Դ. Դեմիրճյանի անկատար, անտիպ երկերի և մտահղացում-պլանները մի մասը: Մեծ գրողի ֆոնդում պահվում են արձակ, շափածո և դրամատիկական երկերի ալ ձեռագրեր նույնպես, որոնք չեն կարող չհետաքրքրել մեր բանասիրությունը:

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԳՈՒԵՍԹԱՆԻ» ՌՈՒՍԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒԲՋԸ

Հայ բանասիրությունը ուսումնասիրել է Ստեփանոս Նաղարյանի հրապարակախոսական, լուսավորական գործունեությունը, զնահատել անցյալ դարի 50—60-ական թվականներին հայ գրական, հասարակական կյանքում կատարած նրա գերը: Այս մասին գրվել են ծավալուն մեկնադրություններ, բազմաթիվ հոբելյանական ու գիտական հոդվածներ, հաղորդումներ, հուշեր և այլն:

Սակայն, եզած ուսումնասիրություններում անուշադրության է մատնվել նրա արևելագիտական գործունեությունը (որին նա քիչ ժամանակ չի նվիրել) կամ, լավագույն դեպքում, այդ մասին հիշատակվել է կենսագրական ու մատենագիտական բաժիններում, անցողակիորեն, առանց քննության: Այնինչ ցայսօր էլ քննիքն է հայտնի, որ Նաղարյանը իր ժամանակի խոշորագույն արևելագետներից մեկն է եղել և մեծ աշխատանք է կատարել ուսման արևելագիտության

¹⁴ Նույն տեղում, № 535ա, 537:

¹⁵ ԳԱԹ, Դեմիրճյանի ֆոնդ, № 701: